



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«04» մարտի, 2016թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 08-Ա/Ք

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ՁԵՌՔԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի գնահատման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2016 թվականի հունվարի 26-ի N02-Ա/Ք հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2016 թվականի ապրիլի մեկից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆԿ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/Հ	Թեմայի ծածկագիր	Թեմայի վերնագիր	Թեմայի ղեկավար	Կազմակերպություն
1	15Ap_1e(2a,2b)007	Շենքերի և կառուցվածքների սեյսմիկ անվտանգության գնահատման և ապահովման դիստանցիոն մոբիլ համակարգ	Կարապետյան Ջոն Կոստիկի	ՀՀ ԳԱԱ «Ա. Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	15Ap_1c005	Հզոր իմպուլսային կիսահաղորդչային լազերների ստեղծում առկա դիոդային լազերների հիման վրա	Կոստանյան Ռադիկ Բենիկի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
3	15Ap_1c006	Թափանցիկ էլեկտրոնիկայի համար ոչ-գծային տարրերի ստեղծումը	Հովսեփյան Ռուբեն Կոնստանտինի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
4	15Ap_1b001	Դիէլեկտրիկ FEU կանալային դուպլեքսորների համար 4-րդ սերնդի հեռահաղորդակցության LTE համակարգերի հետազոտությունները	Բաբաջանյան Արսեն Ժորայի	ՀՀ ԿԳՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
5	15Ap_1d(2e)002	Ակտիվ թթվածնի հիման վրա ախտահանիչ միջոցի ստացման տեխնոլոգիայի մշակում և փորձնական արտադրության կազմակերպում	Թավադյան Լևոն Աղասու	ՀՀ ԳԱԱ «Ա. Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ

6	15Ap_1c(1e)003	Երկրաֆիզիկական մոնիտորինգի և կանխատեսման հայկական ցանց	Չիլինգարյան Աշոտ Ադասու	ՀՀ ԿԳՆ «Ա. Ի. Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
7	15Ap_2b011	Այլընտրանքային տակդիրների վրա բարակ-թաղանթային արեգակնային տարրերի ստեղծում	Պետրոսյան Ստեփան Գրիգորի	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
8	15Ap_2b012	Արդի տեխնոլոգիական պրոցեսներում կիրառման համար ռադիոհաճախականային պլազմայի հսկման և ղեկավարման եղանակների զարգացում և մշակում	Հախումյան Արսեն Ալեքսանդրի	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
9	15Ap_2e015	Սերպենտինացված ուլտրահիմնային ապարների համալիր քիմիական մշակման տեխնոլոգիա	Ձուլումյան Նշան Հովհաննեսի	ՀՀ ԳԱԱ «Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
10	15Ap_2e016	Բնական գինեքարից ստացված խելատագոյացնող բաղադրիչների հիման վրա միկրոպարարտանյութերի և բույսերի պաշտպանության համակցված միջոցների արտադրության տեխնոլոգիայի մշակում և փորձնական նմուշների ստեղծում	Նազարեթյան Արտաշես Խաչատուրի	ՀՀ ԿԳՆ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
11	15Ap_4e018	Սելավային հոսքը կարգավորող հիբրիդային կառուցվածքի մշակում	Քելեջյան Հովհաննես Գևորգի	«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվ. ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ
12	15Ap_4a017	Սենդաժին հիվանդությունների տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում	Խաչատրյան Բագրատ Հմայակի	ՀՀ ԳՆ ՍԱՊԾ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ